## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) ստեղծվել է Բանկի հիմնադիրների (բաժնետերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն 14 դեկտեմբերի 1994թ. կնքված հիմնադիր պայմանագրի, և հանդես է գալիս որպես «Հայինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդ, որը իր հերթին հանդիսացել է «Արմինվեստբանկ» փայատիրական բանկի (ստեղծվել է փայատերերի ժողովի թիվ 1 արձանագրությամբ՝ 1991թ. սեպտեմբերի 10-ի որոշմամբ) իրավահաջորդ:

1.2. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.3. Բանկը՝ շահույթ հետապնդող, առևտրային կազմակերպություն է:

1.4. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության իրականացման լիցենզիա ստանալու պահից:

1.5. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը «Բանկային գաղտնիքի մասին» մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

1.6. Բանկը պատասխանատվություն չի կրում պետական իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.7. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով, միջոցներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.8. Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ, ձևաթուղթ և համարային կնիքներ Բանկի տարածքային ստորաբաժանումների համար:

1.9. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը Բանկի պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բանկի բաժնետերերը, ղեկավարները և այլ անձինք օրենքով նախատեսված դեպքերում Բանկի առջև կարող են կրել պատասխանատվություն իրենց գործողությունների կամ անգործության համար:

1.10. Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.11. Իր գործունեությունն իրականացնելիս Բանկը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ ակտերով, այլ գերատեսչական ակտերով, ինչպես նաև այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական այլ ակտերով:

1.12. Արգելվում է որևէ կերպ ներգործել Բանկի ղեկավարների վրա՝ նրանց պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում կամ միջամտել Բանկի գործունեությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բանկի ղեկավարի վրա ապօրինաբար ներգործելու կամ Բանկի ընթացիկ գործունեությանն ապօրինաբար միջամտելու հետևանքով Բանկին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե Բանկը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդպիսիք չեն ստանձնել: Կենտրոնական բանկը և Բանկը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում:

Բանկն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, այդ թվում՝ գույքի վերագնահատումը:

1.12. Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48:

Բանկի փոստային հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48:

1.13. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

- հայերեն՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերություն
- անգլերեն՝ "ARMBUSINESSBANK" Close Joint Stock Company
- ռուսերեն՝ "АРМБИЗНЕСБАНК" Закрытое Акционерное Общество

1.14. Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

- հայերեն՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- անգլերեն՝ "ARMBUSINESSBANK" CJSC
- ռուսերեն՝ "АРМБИЗНЕСБАНК" ЗАО

## 2. Բանկի բաժնետոմսերը

2.1. Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը: Շուկայական արժեքը որոշվում է օրենքով սահմանված կարգով:

Բանկի բաժնետոմսերը փաստաթղթային են:

2.2. Բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց, որպես վճարման միջոց, օգտագործվում է միայն Հայաստանի Հանրապետության դրամը:

2.3. Բանկի մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը տվյալ բաժնետիրոջը (բաժնետոմսի սեփականատիրոջը) ընդհանուր ժողովում տալիս է մեկ ձայնի իրավունք:

2.4. Բանկը կարող է օրենքով սահմանված կարգով թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր, որոնց տեսակարար կշիռը կանոնադրական հիմնադրամում չի կարող լինել 25 տոկոսից ավելի:

Արտոնյալ բաժնետոմսեր թողարկելու դեպքում սույն կանոնադրությամբ պետք է սահմանվեն դրանց տեսակների և դասերի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանող կանոններ:

2.5. Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան:

## 3. Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

3.1. Բանկը կարող է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով թողարկել պարտատոմսեր և այլ արժեթղթեր:

3.2. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է խորհրդի որոշմամբ: Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Բանկի թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալը, կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկի պարտատոմսեր թողարկելու նպատակով:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը կարող է հանդիսանալ անուղղակի նշանակալից մասնակցություն՝ իր համապատասխան իրավական հետևանքներով:

3.3. Պարտատոմսեր կարող է թողարկվել միայն Բանկի կանոնադրական հիմնադրամի լրիվ վճարումից հետո: Բանկը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք: Ընդ որում, Բանկն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի այն քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը

և այլ արժեթղթերը Բանկի բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար: Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի փոխարկումն իրականացվում է հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:

3.4. Բանկը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Բանկի կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման որոշմամբ սահմանվում են տվյալ պարտատոմսերի կամ այլ արժեթղթերի տեսակները և դասերը, դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև օրենքով պահանջվող այլ տեղեկությունները:

3.5. Բանկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի թողարկել փողի շուկայի կամ արժեթղթերի շուկայի գործիք հանդիսացող այլ արժեթղթեր:

3.6. Բանկի անվանական պարտատոմսերի և այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը Բանկը վարում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

## 4. Բանկի բաժնետերերը

4.1. Բանկի բաժնետեր կարող է լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

4.2. Բանկի յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս դրա՝ սեփականատեր հանդիսացող բոլոր բաժնետերերին տալիս է միևնույն իրավունքները:

4.3. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

4.4. Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը ոչ լրիվ կատարած բաժնետերը Բանկի պարտավորությունների համար կրում է համապարտ պարտավորություն նաև իր կողմից չվճարված ներդրման սահմաններում:

4.5. Բանկին պարտադիր ցուցում տալու իրավունք կամ Բանկի գործունեությունը օրենքով չարգելված այլ կերպ կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերը(երը) Բանկի անվճարունակության դեպքում Բանկի պարտավորությունների դիմաց կրում է լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն, եթե նշված իրավունքը կամ հնարավորություն ունեցող բաժնետերը(երը) դրանք իրագործելիս նախօրոք իմացել է, որ դրա հետևանքով Բանկը կհայտնվի օրենքով սահմանված անվճարունակության վիճակում, այդ թվում կսպառի հիմնական կապիտալի զգալի մասը:

4.6. Ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն հասարակ (սովորական) բաժնետոմսի գինը լրիվ վճարած բաժնետերերը:

4.7. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերը իրավունք ունի՝

ա) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի.

բ) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) ստանալ շահաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.

դ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն.

ե) իր գրավոր դիմումի համաձայն յուրաքանչյուր ամսվան հաջորդող 5-րդ օրվանից ծանոթանալ Բանկի ֆինանսական և այլ հաշվետվություններին և օրենքով սահմանված այլ տեղեկատվությանը.

զ) ընդհանուր ժողովում հանդես գալ առաջարկություններով, ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

է) ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

ը) դիմել դատարան՝ ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը.

ժա) առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

ժբ) ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4.8. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը.

բ) ձեռնպահ մնալ Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց.

գ) կատարել Բանկի կառավարման մարմինների որոշումները.

դ) ենթարկվել օրենքների, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջներին:

Բանկի բաժնետերերը կարող են կրել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտավորություններ:

4.9. Բանկի կանոնադրական հիմնադրամում մեկ բաժնետիրոջը պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը չի սահմանափակվում:

## 5. Բանկի կանոնադրական հիմնադրամը և այլ հիմնադրամները: Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու կարգը, սահմանափակումները: Բանկի կանոնադրական հինմադրամի նվազեցումը:

5.1. **Բանկի կանոնադրական հիմնադրամը.**

5.1.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը՝ պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափն է, որը համալրվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

5.1.2. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 13 450 000 000 (տասներեք միլիարդ չորս հարյուր հիսուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ներառում է 26 900 /քսանվեց հազար ինը հարյուր/ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 500 000 /հինգ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

**5.2. Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը**

5.2.1. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամը Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով:

Բանկն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Բանկը կանոնադրական հիմնադրամը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝

ա) լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի սույն կանոնադրությամբ հայտարարված քանակի սահմաններում.

բ) լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը.

գ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ տվյալներ:

5.2.2. Բանկն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը՝

ա) շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական հիմնադրամ.

բ) Բանկի զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և արտոնյալ բաժնետոմսերի (դրանց առկայության դեպքում) լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական հիմնադրամ:

5.2.3. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Բանկը չի կարող ավելացնել կանոնադրական հիմնադրամն ավելի, քան ընդհանուր ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

5.2.4. Կանոնադրական հիմնադրամի ավելացման մասին որոշումն ընդունում է խորհուրդը:

5.2.5. Մեկ տարուց ոչ պակաս ժամկետում բաժնետոմսերի հավաստագիրը փոխանակելու նպատակով կամ համապատասխան գրառում կատարելու համար չդիմելու դեպքում հավաստագրերը համարվում են անվավեր:

5.2.6. Բանկը չի կարող բաժնետոմսեր թողարկել նաև իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

**5.3. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցումը.**

5.3.1. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևերով արգելվում է, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրության 5.3.2. կետով նախատեսված դեպքերի:

5.3.2. Ձայնի իրավունք տվող բանկի բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն Բանկից պահանջելու մասնակցության հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում, եթե՝

ա) որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման կամ խոշոր գործարք կնքելու մասին (այն դեպքերում, երբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից), և տվյալ բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել.

բ) կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Բանկից իրենց մասնակցության հետգնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը հանգեցրել է բաժնետերերի իրավունքների՝ սույն կետի առաջին պարբերությամբ նշված սահմանափակմանը:

5.3.3. Բանկի կողմից մասնակցության հետգնումը կատարվում է դրա շուկայական արժեքով, որը որոշվում է առանց մասնակցության գնահատման և հետգնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

5.3.4. Բանկը պարտավոր է տեղեկացնել բաժնետերերին՝ նրանց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի և իրականացման կարգի մասին: Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հանգեցնել բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացմանը (5.3.2. կետ), պետք է պարունակի սույն կետում նշված տեղեկությունները: Ծանուցումը պետք է պարունակի նաև տեղեկություններ բաժնետոմսերի հետգնման գնի մասին:

Նշված ընդհանուր ժողովի որոշումների ընդունման պահից՝ 7-օրյա ժամկետում, Բանկը պարտավոր է ծանուցել բաժնետոմսերի հետգնման իրավունք ունեցող բաժնետերերին՝ նրանց

մոտ Բանկից բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացման և հետգնման կարգի մասին: Բաժնետիրոջ՝ իրեն պատկանող բաժնետոմսերը հետգնելու մասին գրավոր պահանջը, որը պարունակում է տեղեկություններ հետգնման ներկայացված բաժնետոմսերի քանակի և բաժնետիրոջ բնակության (գտնվելու) վայրի մասին, ներկայացվում է Բանկ՝ ընդհանուր ժողովի կողմից համապատասխան որոշումների ընդունման պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում:

Սույն կետում սահմանված ժամկետի ավարտից հետո Բանկը պարտավոր է 30 օրվա ընթացքում հետգնել բաժնետոմսերը՝ հետգնման գրավոր պահանջ ներկայացրած բաժնետերերից: Բաժնետոմսերի հետգնումն իրականացվում է սույն կետում նշված ծանուցման մեջ սահմանված գնով:

Բաժնետոմսերի հետգնմանն ուղղվող միջոցների գումարը չի կարող գերազանցել Բանկի զուտ ակտիվների արժեքի տաս տոկոսը: Զուտ ակտիվների արժեքը սահմանվում է սույն կանոնադրության 5.3.2. կետի առաջին պարբերության (ա) և (բ) ենթակետերում նշված որոշումների ընդունման պահի դրությամբ:

Եթե բաժնետերերի պահանջով հետգնման ենթակա բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցում է այն գումարը, որը Բանկը կարող է տրամադրել բաժնետոմսերի հետգնման համար, ապա բաժնետոմսերը հետ են գնվում բաժնետերերի ներկայացված պահանջներին համամասնորեն:

Եթե բաժնետերը համաձայն չէ հետգնման գնի հետ, ապա նա իրավունք ունի բաժնետոմսերի վերագնահատման պահանջով դիմել դատարան՝ Բանկի կողմից բաժնետերերին վճարումը կատարելու սահմանված օրից 3 ամսվա ընթացքում:

Սույն կանոնադրության 5.3.2. կետով սահմանված հիմքերով հետգնված բաժնետոմսերն անցնում են Բանկի տնօրինմանը: Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման մեկ տարվա ընթացքում: Հակառակ դեպքում ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին:

5.3.5. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցում թույլատրվում է նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում:

5.3.6. Մասնակցության հետգնման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնություն տալը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

5.3.7. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս բոլոր քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

### 5.4. <u>**Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելը և դրա սահմանափակումները**</u>

5.4.1. Բանկի բաժնետերերը օրենքով և սույն կետով սահմանված կարգով ցանկացած ժամանակ կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը:

Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի օտարումն իրականացվում է հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Բանկի կանոնադրական հիմնադրամում այլ մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:

Բանկի բաժնետերն ունի Բանկի այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք իրենց պատկանող բաժնեմասին համամասնորեն: Եթե սույն կետով սահմանված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում

նախապատվության իր իրավունքից, ապա բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց:

Բաժնետերը օտարելու իր մտադրության մասին գրավոր ձևով հայտնում է Բանկի վարչության նախագահին: Վարչության նախագահը պարտավոր է գրությունը Բանկ մուտքագրվելու պահից 5-օրյա ժամկետում տեղեկացնել Բանկի մյուս բաժնետերերին սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով: Բաժնետերերի կողմից առաջարկվող բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է 40 օր:

Բանկի կողմից փակ բաժանորդագրության կարգով տեղաբաշխվող բաժնետոմսեր կարող են ձեռք բերել նաև բանկի մասնակից չհանդիսացող անձանց:

Բանկի բաժնետերերը (հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը) Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Նշված նախապատվության իրավունքը բաժնետերերն իրականացնում են համապատասխան տեղաբաշխման մասին իրենց ծանուցելու պահից 10 օրվա ընթացքում:

Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է ընդհանուր ժողովի գումարման մասին սահմանված կարգով Բանկի դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն երեսուն օր առաջ ծանուցվեն նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

Ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի՝

ա) տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի մասին.

բ) տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման գնի (այդ թվում՝ տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի համար տեղաբաշխման գնի) մասին.

գ) Ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռք բերվող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի որոշման կարգի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին:

Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկող արժեթղթերի ձեռքբերման մասին Բանկի գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա) բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.

բ) ձեռք բերվող բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի քանակը.

գ) բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Ծանուցումը պետք է ներկայացվի բանկի քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

5.4.2. Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում հայտարարություն այն մասին, որ իր մասնակցության միջոցով որևէ այլ անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում այդ անձը պարտավոր է ներկայացնել նաև անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը: Անուղղակի նշանակալից մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու համար սույն կետով սահմանված կարգով պահանջվում է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի նաև ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն), ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած ձևով այն իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ ղեկավարների մասին, տեղեկություններ նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին), որոնցում Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձի կամ փոխկապակցված անձանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող օրենքով սահմանված փաստաթղթերի և այլ փաստաթղթերի, տեղեկությունների ցանկը, ձևը, դրանց ներկայացման կարգը և պայմանները սահմանում է Կենտրոնական բանկը:

Կենտրոնական բանկը սույն կետով սահմանված կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քննում է դրանք: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կասեցվել: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

5.4.3. Կենտրոնական բանկը մերժում է դիմումը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

5.4.4. Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է:

5.4.5. Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ սույն կետով սահմանված անձանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես սույն կանոնադրության և օրենքով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Օֆշորային տարածքների ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Սույն կետով սահմանված անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ ստեղծված իրավաբանական անձինք Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ դրա չափից) կարող են ձեռք բերել բացառապես սույն կանոնադրության և օրենքով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

5.4.6. Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում անձի և (կամ) փոխկապակցված անձանց մասնակցությունը բանկի կանոնադրական կապիտալում կգերազանցի համապատասխանաբար 10, 20, 50 և 75 տոկոսը:

## 6. Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները

6.1. Բանկը բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով հետևյալ ֆինանսական գործառնությունները՝

ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.

բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առեւտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.

ե) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

զ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.

է) իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն.

ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).

թ) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամներ.

ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն.

ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն:

6.2. Կենտրոնական բանկը կարող է թույլատրել Բանկին իրականացնելու «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ սույն կանոնադրության 6.1. կետում նախատեսված գործառնությունների հետ, և եթե դրանք թույլատրելը չի հակասում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակներին և էականորեն չի վտանգում Բանկի ավանդատուների և վարկատուների շահերը:

6.3. Բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով իրավունք ունի իրականացնել արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեություն (բրոքերային, դիլերային, հավատարմագրային կառավարման, պահառուական և այլն):

Բանկն իրականացնում է մասնագիտացված գործունեություն պետական արժեթղթերի շուկայում՝ մասնակցելով պետական պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացում (դիլերային, գործակալական, պահառուական գործունեություն):

6.4. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրեն օրենքով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար:

Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

6.5. Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

6.6. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի, իր կողմից թողարկված արժեթղթերի տոկոսադրույքները և իր կողմից մատուցվող այլ ծառայությունների դիմաց գանձվող միջնորդավճարների չափը:

6.7. Բանկի և հաճախորդի միջև հարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ:

Բանկը իր գործունեության այնպիսի կանոններ է սահմանում, որպեսզի բացառվի շահերի բախումը, մասնավորապես՝

ա) մեկ հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորությունները չհակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ նրա ստանձնած պարտավորություններին.

բ) Բանկի ղեկավարների և աշխատակիցների շահերը չհակասեն Բանկի հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորություններին:

6.8. Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության՝ Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում 4,99 տոկոս և ավելի մասնակցություն է.

բ) մեկ անձի կանոնադրական կապիտալում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը.

գ) բոլոր անձանց կանոնադրական կապիտալներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը.

Բանկը, օրենքով սահմանված կարգով, այլ անձանց կանոնադրական կապիտալներում մասնակցություն ձեռք բերելիս տվյալ անձանց հաշվեկշիռը միավորում է իր հաշվեկշռում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը մեկ այլ կամ միևնույն անձի կանոնադրական կապիտալում գերազանցում է 9 տոկոսը, 15 տոկոսը, 25 տոկոսը, 35 տոկոսը, 50 տոկոսը, 70 տոկոսը կամ կազմում է 100 տոկոս:

6.9. Սույն կանոնադրության 6.8. կետով նախատեսված նախնական համաձայնությունը չի պահանջվում, եթե՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը Բանկին է անցել Բանկի նկատմամբ ստանձնած և չկատարած պարտավորությունների դիմաց: Նման կարգով ձեռք բերված մասնակցությունը Բանկը պետք է օտարի հնարավոր կարճ ժամանակամիջոցում, բայց վեց ամսից ոչ ուշ: Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև տվյալ բանկի ֆինանսական վիճակը, կարող է հիշյալ բաժնետոմսերից առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով սույն ենթակետով սահմանված ժամկետը երկարացնել ևս վեց ամսով.

բ) Բանկը մի այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը ձեռք է բերել իր հաճախորդի անունից և հաշվին կամ կոմիսիոն հիմունքներով բաժանորդագրական գործունեություն իրականացնելու ընթացքում, եթե ըստ պայմանագրի Բանկը պարտավոր է թողարկողին հատուցել միայն իրացված (տեղաբաշխված) արժեթղթերի արժեքը:

## 7. Բանկի շահույթի բաշխումը

7.1. Տարեկան գործունեության արդյունքում Բանկի ստացված համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

7.2. Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված հարկերի դրական տարբերություն:

7.3. Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

7.4. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

7.5. Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

7.6. Բանկի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու:

7.7. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո:

7.8. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են բանկի մասնակիցների ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են բանկի մասնակիցների ռեեստրում՝ բանկի մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.9. Բանկի մասնակիցներին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

## 8. Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները

8.1. Բանկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

8.2. Բանկի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը: Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

8.3. Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

8.4. Բանկի մասնաճյուղը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությունով նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում՝ ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մասնաճյուղը կարող է իրականացնել նաև ներկայացուցչական ֆունկցիա:

8.5. Բանկի ներկայացուցչությունը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

8.6. Բանկը կարող է հիմնել նաև հիմնարկներ: Հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն

իրականացնելու համար Բանկի ստեղծած իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունը:

8.7. Բանկի հիմնարկ ստեղծելու մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը:

## 9. Բանկի կառավարման մարմինները

9. Բանկի կառավարման մարմիններն են՝

ա) Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը,

բ) Բանկի խորհուրդը,

գ) Բանկի վարչության նախագահը,

դ) Բանկի վարչությունը:

Բացի վերը նշված կառավարման մարմինների Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ և ներքին աուդիտի ստորաբաժանում:

## 9.1. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը

9.1.1. Ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

9.1.2. Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով: Տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6/վեց/ ամսվա ընթացքում:

9.1.3. Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի կամ հարցման կարգով (հեռակա քվեարկություն):

Ընդհանուր ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ օրենքի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

9.1.4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր.

բ) Բանկի կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսեր տեղաբաշխված լինելու դեպքերում՝ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր.

գ) Բանկի մասնակից չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

դ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.

ե) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).

զ) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.

է) տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ որպես դիտորդ,

ը) Բանկի այլ աշխատակիցները՝ իրենց կողմից ընդհանուր ժողովովի օրակարգում ընդգրված հարցերը զեկուցելու դեպքում,

թ) ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված որոշակի հարցերի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներին տիրապետող անձինք:

9.1.5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողով գումարելու մասին խորհրդի որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:

Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

9.1.6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

9.1.7. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի կանոնադրական հիմնադրամում նրան պատկանող մասնակցության մասին:

9.1.8. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Բանկի այն բաժնետերերին, որոնք գրանցված են Բանկի բաժնետերերի ռեեստրում:

Նշված ցուցակը տրամադրվում է ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը սույն կանոնադրության 9.1.11. կետում նշված ծանուցման հետ միաժամանակ:

Բանկի բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

Նշված տեղեկանքը տրամադրվում է ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը վերջինիս գրավոր դիմումի հիման վրա՝ երկօրյա ժամկետում:

9.1.9. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալները ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

9.1.10. Բանկն ընդհանուր ժողովի անցկացման մասին իր բաժնետերերին ծանուցում է ընդհանուր ժողովի գումարման օրվանից 30 օր առաջ:

9.1.11. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջ ծանուցումն իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու, կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցելու միջոցով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր բաժնետիրոջ համար նախընտրելի ծանուցման ձևը:

Ընդ որում բաժնետերն իր համար նախընտրելի ձևը և կապի միջոցների տվյալները նախօրոք տրամադրում է Բանկին: Բաժնետերը նշված տվյալների և ծանուցման ձևի փոփոխման դեպքում նախապես հայտնում է Բանկին: Հակառակ դեպքում Բանկը բաժնետիրոջը ծանուցում է իր մոտ առկա տվյալներին համապատասխան:

Բանկը հավաստիանում է այն մասին, որ բաժնետերը սույն կետով սահմանված կարգով պատշաճ ծանուցվել է:

9.1.12. Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) Բանկի ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը.

բ) ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

գ) ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում:

9.1.13. Եթե Բանկի բաժնետերերի ռեեստրում գրանցված անձը բաժնետոմսերի անվանատերն է, ապա ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է

օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

9.1.14. Բանկի բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում, Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30-60 օրվա ընթացքում, իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ:

Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով

ա) հարցի առաջարկման հիմքերը.

բ) հարցը առաջարկող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը).

գ) նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը.

դ) առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

9.1.15. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելու սույն կանոնադրության 9.1.14. կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն կանոնադրության 9.1.14. կետով սահմանված ժամկետը.

բ) առաջարկ ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) տնօրինում Բանկի սույն կանոնադրության 9.1.14. կետով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերին.

գ) լրիվ չեն կամ բացակայում են սույն կանոնադրության 9.1.14. կետով սահմանված տվյալները.

դ) առաջարկը հակասում է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

9.1.16. Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին)՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

Խորհրդի որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելը մերժելու մասին, կարող է բողոքարկվել դատական կարգով:

9.1.17. Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, որոշում է՝

ա) ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը.

բ) ընդհանուր ժողովի օրակարգը.

գ) ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե) բաժնետերերին ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

9.1.18. Տարեկան ընդհանուր ժողովից բացի գումարվող ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ընդհանուր ժաղովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Բանկի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի խորհրդի որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է օրակարգը, արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

9.1.19. Ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ) ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժա) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.

ժբ) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:

Սույն կետում նշած հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի խորհրդին, Բանկի գործադիր մարմնի անդամներին կամ այլ անձի:

9.1.20. Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ընդհանուր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Չկայացած ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր ընդհանուր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

9.1.21. Ընդհանուր ժողովն անցկացվում է հետևյալ կարգով.

ա) Ընդհանուր ժողովի քարտուղարը մինչև նիստի բացումը ընդհանուր ժողովի նախագահին զեկուցում է բաժնետերերի նիստին ներկա լինելու վերաբերյալ:

բ) Ընդհանուր ժողովի նախագահը ողջունում է ներկաներին և նիստը հայտարարում է բացված:

գ) Ընդհանուր ժողովի նախագահը ներկայացնում է ընդհանուր ժողովի օրակարգը, որից հետո օրակարգի հարցերը ըստ հերթականության դնում է քննարկման,

դ) Ընդհանուր ժողովի նախագահը առաջարկում է ցանկացողներին իրենց կարծիքը ներկայացնել առաջադրվող հարցի վերաբերյալ:

ե) առաջադրված հարցի վերաբերյալ կարծիքների արտահայտման փուլն ավարտվելուց հետո քննարկվող հարցը դրվում են քվեարկության:

զ) Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է "Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն" սկզբունքով:

9.1.22. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ընդհանուր ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

Սույն կանոնադրության 9.1.19. կետի "բ" ենթակետում նշված հարցերով որոշումներն ընդունում է ընդհանուր ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ:

Սույն կանոնադրության 9.1.19. կետի "ա", "բ", "դ" և "զ" ենթակետերում նշված հարցերով որոշումներն ընդունում է ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Սույն կանոնադրության 9.1.19. կետի "գ" ենթակետում նշված հարցով, ինչպես նաև Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումներն ընդունում է ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընդհանուր ժողովը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող այլ հարցերով որոշումներ ընդունելու դեպքերում առաջնորդվում է նույն օրենքով տվյալ որոշումների ընդունման համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրեքով սահմանված դրույթները:

Ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

Ընդհանուր ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները Բանկի բաժնետերերին ներկայացվում են պատվիրված նամակներ ուղարկելու, կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու միջոցով՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

9.1.23. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ սույն կանոնադրության 9.1.19. կետի "բ", "գ" և "ը" ենթակետերում նշված հարցերի: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովի նիստերի ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված ընդհանուր ժողովին բաժնետերերի ծանուցման կարգով:

Ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ընդհանուր ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են օրենքով սահմանված տեղեկությունները և նյութերը:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ընդհանուր ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ:

9.1.24. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով անցկացվող ընդհանուր ժողովի նիստերի ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված ընդհանուր ժողովի գումարման ծանուցման կարգով:

9.1.25. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ 2 օրինակով, որոնք ստորագրում են ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը:

Ընդհանուր ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ընդհանուր ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Արձանագրության մեջ նշվում են՝

ա) ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

բ) Բանկի՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.

գ) ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը.

դ) ընդհանուր ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը), ընդհանուր ժողովի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի ընդհանուր ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ընդհանուր ժողովի ընդունած որոշումները:

Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ ընդհանուր ժողովի արձանագրություններին:

## 9.2. Բանկի խորհուրդը

9.2.1. Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

9.2.2. Խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որը բավարարում է Հայաստանի Հանրապետության գործող օրենքներով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին:

9.2.3. Բանկի խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 15 անդամից:

9.2.4. Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի մասնակիցները, ինչպես նաև խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):

9.2.5. Բանկի բաժնետերերը իրենց կողմից խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրելու դեպքում այդ մասին գրավոր հայտնում են Բանկի խորհրդի նախագահին՝ տարեկան ընդհանուր ժողովի, ինչպես նաև արտահերթ ընդհանուր ժողովի (եթե արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված է խորհրդի անդամի(ների) լիազորությունները վաղաժամկետ դադարեցման հարց) մասին ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

9.2.6. Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, գրավոր առաջարկում նշվում է թեկնածուի անունը, նրա Բանկի բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը, նրան առաջադրող Բանկի բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), վերջինիս պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը:

Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն կանոնադրության 9.2.5. կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն կանոնադրության 9.2.5. կետով սահմանված ժամկետը.

բ) լրիվ չեն կամ բացակայում են սույն կետով սահմանված տվյալները.

գ) առաջարկը հակասում է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

9.2.7. Խորհուրդը իր կողմից սույն կանոնադրության 9.2.4. կետով նախատեսված խորհրդի անդամության թեկնածու առաջադրում է Բանկի ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկելու միջոցով:

9.2.8. Բանկի այն մասնակիցները, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

9.2.9. Բանկի այն մասնակիցները, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի

տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա) Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.

բ) միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները.

գ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

դ) միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

9.2.10. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Բանկի խորհրդի կազմում:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակից է համարվում տվյալ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել սույն կանոնադրության 9.2.9. կետում նշված պայմանագիրը: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում սույն կանոնադրության 9.2.9. կետում նշված պայմանագիրը կնքած Բանկի մասնակիցները:

Բանկի փոքր մասնակիցները ծանուցվում են Բանկի խորհրդի կողմից իրենց փոքր մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու մասին ընդհանուր ժողովի համար ծանուցման կարգով՝ սույն կանոնադրության 9.2.9 կետում նշված պայմանագիրը(երը) ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ծանուցվելուց հետո փոքր մասնակիցները կարող են բանակցել միմյանց հետ խորհրդի անդամի թեկնածու առաջադրելու վերաբերյալ: Համաձայնության չգալու դեպքում ընդհանուր ժողովի անցկացման օրը փոքր մասնակիցները փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում են խորհրդի անդամի թեկնածու՝ իրենց կողմից առաջադրված թեկնածուների թվից: Քվեարկությունը կազմակերպվում և անցկացվում է Բանկի խորհրդի նախագահի կամ նրա նշած խորհրդի անդամի կողմից:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին՝ օրենքով պահանջվող տեղեկատվությունը խորհրդի կողմից ներկայացվում է ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

9.2.11. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և տվյալ Բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

9.2.12. Խորհրդի անդամները վարձատրվում են: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

9.2.13. Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Բանկի խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ) նախագահում է Բանկի ընդհանուր ժողովում.

ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:

Խորհրդի նախագահը խորհրդի անդամների միջև բաշխում է Բանկի գործունեության որոշակի ոլորտների նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունները:

Խորհրդի նախագահը խորհրդին կից հանձնաժողովներին տալիս է հանձնարարականներ, որոնք ենթակա են կատարման 5-օրյա ժամկետում կամ խորհրդի նախագահի կողմից սահմանված այլ ժամկետում:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորությունները կատարում է խորհրդի նախագահի տեղակալը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ խորհրդի տարիքով ավագ անդամը:

9.2.14. Խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

գ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը.

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

ժ) ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժգ) Բանկի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ժե) սույն կանոնադրության 9.1.19. կետի "բ" ենթակետով նախատեսված հարցի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը.

ժզ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժէ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժը) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժթ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ի) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իա) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իբ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

իգ) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.

իդ) խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

իե) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

9.2.15. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում

ա) քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը).

բ) քննարկում է և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը:

Սույն կետում նշված հարցերի վերաբերյալ խորհրդի նիստին ներկա են գտնվում Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Բանկում գործող բոլոր հանձնաժողովների ղեկավարները, որոնք իրենց առաջարկություններն են ներկայացնում Բանկի ռազմավարության, հաճախորդների սպասարկման բարելավման, ինչպես նաև Բանկի կառավարման ոլորտում հայտնաբերված բացերի վերացման վերաբերյալ:

Բանկի աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը ներկայացվում է աուդիտորական ընկերության ներկայացուցիչը, որի թեկնածությունը նախապես ընդգրկվում է խորհրդի նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց կազմում: Աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը ներկայացվում է առաջինը:

9.2.16. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում քննարկում է և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

Նշված հարցի վերաբերյալ խորհրդի նիստում ներկայացնում է Բանկի խորհրդի այն անդամը, որի վրա դրված է նշված ոլորտի կանոնակարգումը:

9.2.17. Յուրաքանչյուր եռամսյակը մեկ Բանկի խորհուրդը քննարկում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, վարչության նախագահի (վարչության) և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները:

9.2.18. Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

Խորհրդի նիստերը գումարում է Բանկի խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Բանկի վարչության նախագահի (վարչության), ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

Սույն կետում նշված խորհրդի նիստի գումարման պահանջն ստանալու պահից 10-օրյա ժամկետում խորհուրդը պատասխանում է դիմողներին տեղեկացնելով խորհրդի նիստի գումարման ժամանակի և վայրի մասին:

9.2.19. Խորհրդի անդամների ծանուցումը նիստի գումարման մասին իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու, կամ անձամբ դրանք հանձնելու, կամ էլեկտրոնային փոստային հասցեով ծանուցելու միջոցով:

Խորհրդի նիստի գումարման մասին խորհրդի անդամները ծանուցվում են նիստի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ:
Նիստի մասին ծանուցումը պետք է պարունակի`
ա) Բանկի անվանումն ու գտնվելու վայրը.
բ) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը/
գ) նիստի օրակարգում ընդգրկված հարցերը.
դ) խորհրդի անդամների ծանոթանալու կարգը նիստում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին:
9.2.20. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով ընդհանուր ժողովի նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն:
Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Սույն կանոնադրության 9.2.14. կետի "գ", "դ", "ժ" և "ժդ" ենթակետերում նշված, ինչպես նաև Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:
9.2.21. Խորհրդի նիստերն իրավասու են, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով սահմանված դեպքերի:
9.2.22. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի վարչության նախագահի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Բանկի վարչության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի վարչության նախագահը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:
9.2.23. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
բ) նիստին մասնակցած անձինք.
գ) նիստի օրակարգը.
դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի.
ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.
զ) նիստում ընդունված որոշումները:
Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:
9.2.24. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Բանկի խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:
Բանկի խորհուրդն ընդունում է Բանկի վարչության նախագահի, գլխավոր հաշվապահի և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ներկայացման կարգ, որը սահմանվում է սույն կանոնադրության

դրույթներին համապատասխան: Նշված կարգում նշվում են հաշվետվությունների տեսակները, դրանք Խորհրդի անդամներին նախապես ներկայացման կարգը, մինչև խորհրդի նիստը անհրաժեշտության դեպքում Խորհրդի անդամների մոտ քննարկման կարգը և Խորհրդի նիստի ժամանակ դրանք ներկայացնելու կարգը:

9.2.25. Ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար).

գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից (իրական ժամանակի ռեժիմով և սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն).

դ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն մասի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

## 9.3. Բանկի վարչության նախագահը, բանկի վարչությունը

9.3.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է վարչության նախագահը և վարչությունը: Վարչության նախագահը կարող է ունենալ տեղակալներ: Վարչության նախագահը (վարչության անդամները) նշանակվում է (են) խորհրդի կողմից, իսկ վարչության նախագահի տեղակալները՝ խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ:

9.3.2. Վարչությունը գործում է կանոնադրության, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված Բանկի վարչության կանոնակարգի և այլ ակտերի հիման վրա, որոնք սահմանում են վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

9.3.3. Վարչության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են Բանկի վարչության նախագահը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը:

9.3.4. Վարչության նիստերն հրավիրվում են յուրաքանչյուր ամսվա ընթացքում առնվազն 2 անգամ:

Վարչության նիստերն իրավասու են, եթե նիստին մասնակցում են վարչության անդամների կեսից ավելին: Վարչության որոշումներն ընդունվում են նիստին ներկա վարչության անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ վարչության յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ վարչության այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում վարչության նախագահի ձայնը որոշիչ է:

9.3.5. Վարչության նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունները ներկայացվում են խորհրդին, ներքին աուդիտին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին մասնակցած անձինք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած տնօրինության յուրաքանչյուր անդամի.

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ տնօրինության անդամների և տնօրինության նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

զ) նիստում ընդունված որոշումները:

Վարչության նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Վարչության նիստերը կազմակերպում և վարում է վարչության նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Վարչության նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.3.6. Վարչության նախագահը՝

ա) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

բ) ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է Բանկի անունից առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) Բանկի անունից կնքում է գործարքներ.

զ) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

է) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի.

ը) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.

թ) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ընդհանուր ժողովի, խորհրդի, վարչության կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են վարչության նախագահի իրավասությանը:

9.3.7. Վարչությունը՝

ա) կազմակերպում և իրականացնում է Բանկի օպերատիվ գործունեության ղեկավարումը և ապահովում է ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը.

բ) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը, ներգրավող ավանդների և տրամադրվող վարկերի տոկոսադրույքները.

գ) քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները.

9.3.8. Վարչության նախագահը (վարչությունը) եռամսյակը մեկ խորհրդին խորհրդի սահմանած ձևով ներկայացնում են իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություններ սույն կանոնադրությամբ և վարչության կանոնակարգով սահմանված կարգով:

9.3.9. Վարչության նախագահի (վարչության) իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Բանկի վարչության նախագահի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

9.3.10. Խորհրդի կողմից վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի գործադիր տնօրեն (բանկի ղեկավար).

գ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի վարչության նախագահի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն կետում նշված նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով վարչության նախագահի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

## 9.4. Բանկի գլխավոր հաշվապահը

9.4.1. Գլխավոր հաշվապահը իրականացնում է "Հաշվապահական հաշվառման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

9.4.2. Գլխավոր հաշվապահը նշանակվում է խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ:

9.4.3. Գխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

9.4.4. Գլխավոր հաշվապահն յուրաքանչյուր եռամսյակը մեկ խորհրդին և վարչությանն է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

9.4.5. Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան: Նշված հաշվետվությունների և տեղեկատվության մեջ անարժանահավատ տվյալների հայտնաբերման դեպքերում՝ գլխավոր հաշվապահը ներկայացնում է դրանց առաջացման նախադրյալները, վկայակոչում է Բանկի աշխատակիցներին, որոնք անմիջականորեն աշխատել են տվյալ հաշվետվությունների կամ տեղեկատվության կազմման աշխատանքներին և առաջարկում է միջոցներ դրանք ապագայում չկրկնելու կամ առկա թերությունները վերացնելու ուղղությամբ: Եթե նման դեպքերը կրում են պարբերական բնույթ, ապա խորհուրդը հարց է բարձրացնում գլխավոր հաշվապահի մասնագիտական համապատասխանության հարցը քննարկելու մասին:

Գլխավոր հաշվապահը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետութան օրենքով, այլ օրենքներով և իր կողմից կնքված «Լրիվ նյութական պատասխանատվության» պայմանագրին համապատասխան պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված վնասների համար:

## 9.5. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը

9.5.1. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները նշանակվում են խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ

ղեկավարները ու աշխատակիցները, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:
Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:
9.5.2. Ներքին աուդիտը խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝
ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.
բ) հսկողություն է իրականացնում Բանկի վարչության նախագահի (վարչության), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, վարչության նախագահին (վարչությանը) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.
գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:
Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
9.5.3. Ներքին աուդիտի ղեկավարը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով խորհրդին և վարչությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝
ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.
բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են վարչության նախագահի (վարչության) կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:
Սույն կետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց երկու աշխատանքային օրվա ընթացքում:
Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք հայտնաբերելուց երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք համապատասխան միջոցառումներ:

## 10. Բանկի գույքի ձեռք բերման և օտարման հետ կապված խոշոր գործարքները: Բանկի գործարքներում շահագրգռվածությունը

10.1. Խոշոր են համարվում՝
ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Բանկի բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Բանկի կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույք ձեռքբերման հնարավորության կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը.
բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Բանկի հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է Բանկի կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 25 և ավելի տոկոսը:
Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն կանոնադրության սահմանված կարգով:
10.2. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն:
Եթե գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու՝ հարցն ընդհանուր ժողովում քննարկելու մասին:
Սույն կետով սահմանված դեպքում, ինչպես նաև եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է

Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Սույն կետով պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

Սույն կետով պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

10.3. Բանկի գործարքներում շահագրգիռ անձինք են համարվում խորհրդի անդամը, Բանկի կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող անձը կամ Բանկի բաժնետերը, որն իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին.

գ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

10.4. Սույն կանոնադրության 10.3 կետում նշված անձինք պարտավոր են տեղեկություններ տրամադրել խորհրդին, ներքին աուդիտին և արտաքին աուդիտն իրականացնող անձին՝

ա) այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ նրանց հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին.

բ) այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նրանք պաշտոններ են զբաղեցնում.

գ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ:

10.5. Բանկի որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

10.6. Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ՝

- գործարքը կնքելու հետևանքով Բանկի կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Բանկի կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն կանոնադրության 10.12. կետով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ՝

- գործարքը կնքելու հետևանքով Բանկի ձեռք բերած գույքի, ստացված ծառայության կամ Բանկի համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն կանոնադրության 10.12. կետով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

10.7. Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ, եթե գործարքը և (կամ) փոխկապակցված գործարքները կնքվում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Բանկի այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

10.8. Գործարքի կնքումը, որում առկա է շահագրգռվածությունը, և որը բավարարում է սույն կանոնադրության 10.7. կետով սահմանված պահանջները, կարող է կնքվել առանց ընդհանուր ժողովի որոշման, եթե՝

ա) գործարքը բանկին շահագրգիռ անձի կողմից տրամադրվող փոխառություն է.

բ) գործարքը Բանկի և մյուս կողմի միջև արդյունք է բնականոն տնտեսական գործունեության, որը կնքվել է մինչև սույն կանոնադրության 10.3. կետի դրույթներին

համապատասխան շահագրգռվածության ճանաչումը (որոշում չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի գումարման օրը):

Եթե ընդհանուր ժողովի անցկացման օրվա դրությամբ անհնար է կանխատեսել Բանկի և գործարքի մյուս կողմի բնականոն տնտեսական գործունեության ընթացքում շահագրգռվածության հնարավորությունը, ապա սույն կանոնադրության 10.7. կետի պահանջները համարվում են կատարված, եթե ընդհանուր ժողովը որոշում կընդունի Բանկի և մյուս կողմի միջև պայմանագրային հարաբերությունների հաստատման մասին, որով կսահմանվի կնքվող գործարքների բնույթը և գործարքների առավելագույն արժեքը:

10.9. Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ընդհանուր ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

10.10. Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ Բանկի գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն կանոնադրության օրենքի 10.1 և 10.2 կետերի դրույթները:

10.11. Գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը և կնքվել է սույն կանոնադրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր և չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

Շահագրգիռ ճանաչված անձը Բանկի առջև պատասխանատվություն է կրում Բանկին պատճառված վնասների չափով: Եթե պատասխանատվության ենթակա է մի քանի անձ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Անձն ազատվում է սույն մասով սահմանված պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ գործարքի կնքմամբ Բանկը կկրի վնասներ:

Շահագրգռվածության առկայության դեպքում Բանկի գործարքների կնքման վերաբերյալ սույն կանոնադրությանև օրենքի պահանջները չեն կիրառվում, եթե՝

ա) բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը.

բ) իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը.

գ) կանոնադրական հիմնադրամում մասնակցությունը Բանկի կողմից ձեռք բերելու դեպքում, եթե տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերի բոլոր սեփականատերերն ունեն հավասար իրավունք՝ համամասնորեն վաճառելու իրենց պատկանող տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերը:

Սույն կետի պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

10.12. Գույքի շուկայական արժեք է համարվում (ներառյալ՝ Բանկի բաժնետոմսերի և այլ արժեթղթերի արժեքը) այն գինը, որով գույքի արժեքի մասին անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայներ վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայներ այդ գույքը ձեռք բերել:

Գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի որոշմամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:

Գույքի շուկայական արժեքի որոշման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից Բանկը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ:

Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի որոշումը պարտադիր է օրենքով սահմանված՝ Բանկի մասնակիցների՝ Բանկի կանոնադրական հիմնադրամում ունեցած մասնակցության հետգնման դեպքերում:

Բանկի բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նա

առաջարկի և պահանջարկի գների վերաբերող և համապատասխան զանգվածային լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:

Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը, ինչպես նաև այն գինը, որը բանկի բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի համար համաձայն է վճարել Բանկի գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք Բանկի գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր:

Սույն կետով որոշվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է՝ Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը հիմք ընդունելով:

## 11. Տեղեկությունները և դրանց հրապարակումը

11.1. Բանկը ինտերնետում՝ Բանկի տնային էջում, պարտավոր է մշտապես հրապարակել՝

ա) Բանկի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը: Ընդ որում, Բանկը պարտավոր է տարեկան ֆինանսական հաշվետվությունը, աուդիտային եզրակացությունը ֆինանսական տարվա ավարտից հետո 4-ամսյա ժամկետում հրապարակել մամուլում, իսկ եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

Բանկը պարտավոր է նաև հրապարակել դրանք առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Բանկի գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում).

բ) օրենքով սահմանված ժամկետում՝ տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը: Ընդ որում, Բանկը պարտավոր է տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակել նաև մամուլում.

գ) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում.

դ) Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

ե) Բանկի խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, խորհրդի անդամների, վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը:

Սույն կետի "ա-ե" ենթակետերում նշված տեղեկություններից բացի, Կենտրոնական բանկը կարող է պահանջել Բանկից ինտերնետում՝ Բանկի տնային էջում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած հաճախականությամբ և կարգով հրապարակել նաև այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների:

Բանկը պարտավոր է հրապարակել սույն կետի "ա-ե" ենթակետերում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկը պարտավոր է ինտերնետում՝ Բանկի տնային էջում, և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Բանկի գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում եւ ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իր կողմից ավանդների ընդունման, վարկերի տրամադրման, ինչպես նաև մատուցվող բոլոր այլ ծառայությունների և հաճախորդների համար իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, այդ թվում՝ տոկոսադրույքներ, ծառայության միջնորդավճարներ, ժամկետայնություն և էական այլ պայմաններ:

11.2. Բանկը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝

ա) Բանկի պետական գրանցման վկայականի և Բանկի կանոնադրության պատճենները.

բ) Բանկի թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ տեղեկություններ՝ "Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով.

գ) սույն կանոնադրության 10.1. կետում նշված տեղեկությունները կամ փաստաթղթերի պատճենները:

Սույն կետում նշված տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:

Բանկը պարտավոր է իր գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ տեսանելի վայրում, փակցնել հայտարարություն՝ սույն կետում նշված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին:

11.3. Բանկի յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք)՝

ա) Բանկի խորհրդի, վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի վերաբերյալ սույն կանոնադրության 10.4. կետում նշված տեղեկությունները.

բ) Բանկի խորհրդի անդամների, վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

գ) Բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34 հոդվածի առաջին մասի "ա-գ", "ք", "ժ" և "ժա" կետերով սահմանված գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ.

դ) Բանկի կողմից Բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

ե) Բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող մասնակիցների խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև Բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող մասնակիցների անունները (անվանումները).

զ) Բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած Բանկի ներքին ակտերի, Բանկի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, Բանկի կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, ընդհանուր ժողովի, խորհրդի, վարչության նիստերի արձանագրությունների, Կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները, Կենտրոնական բանկի կողմից Բանկի և (կամ) Բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից խորհրդին և վարչության նախագահին (վարչությանը) ներկայացված հաշվետվությունների պատճենները.

է) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում Բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներազդելու նրանց որոշումների վրա:

Բանկի բոլոր մասնակիցներին պետք է տրամադրվեն հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:

Բանկի մասնակցի ստացած տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել Բանկի գործարար համբավը արատավորելու, Բանկի բաժնետերերի կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

Սույն կետում նշված տեղեկությունները բաժնետիրոջը տրամադրվում են 5-օրյա ժամկետում՝ վերջինիս գրավոր դիմումի հիման վրա:

11.4. Բանկի խորհրդի անդամների, վարչության նախագահի, գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաև խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Բանկի բաժնետերերին բացահայտվող տեղեկատվությունը պետք է ներառի նաև՝

ա) նրանց ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) մասնագիտությունը և կրթությունը.

գ) վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.

դ) տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը.

ե) տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը.

զ) Բանկի բաժնետեր հանդիսացող խորհրդի անդամին, վարչության նախագահին, գլխավոր հաշվապահին կամ խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը.

է) տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.

ը) փոխհարաբերությունների բնույթը Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ:

11.5. Բանկը իրավունք չունի իր գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իր անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ Բանկի վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ Բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

11.6. Բանկի կողմից, սույն կանոնադրությամբ և օրենքների համաձայն, հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

## 12. Բանկի արտաքին աուդիտը

12.1. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ նաև արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Բանկի արտաքին աուդիտին ընտրում է ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Բանկի խորհուրդը:

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

12.2. Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Բանկի ղեկավարությանը) կազմում: Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

## 13. Բանկի ֆինանսական հաշվետվությունները և վերահսկողությունը բանկի նկատմամբ

13.1. Բանկը կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, եռամսյակային ֆինանսական և այլ հաշվետվություններ:

13.2. Բանկը Կենտրոնական բանկի սահմանած ձևով, դեպքերում, կարգով և ժամկետներում, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

ա) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

բ) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

գ) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հայտարարությունները այն մասին, որ նրանց մասնակցության միջոցով որևէ նոր անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերել: Հակառակ դեպքում Բանկը պարտավոր է Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու նպատակով այդ անձի՝ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, Կենտրոնական բանկ ներկայացնել Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը, ինչպես նաև այն իրավաբանական անձանց վերաբերյալ փաստաթղթերը (այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական հաշվետվություններ, տեղեկություններ ղեկավարների մասին, տեղեկություններ նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին), որոնցում Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձը հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ:

Սույն կետով սահմանված հաշվետվությունները և տեղեկությունները բանկ ներկայացնելու պարտականությունը կրում են Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք:

13.3. Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

13.4. Բանկի ֆինանսական տարվա ժամանակաշրջանը հունվարի 1-ից մինչև նույն տարվա դեկտեմբերի 31-ն է:

13.5. Բանկի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է "Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 գլխով սահմանված կարգով:

Բանկը պարտավոր է ընդունել և աջակցել Կենտրոնական բանկի ծառայողներին: Վերահսկողություն և վերստուգումներ իրականացնելիս արգելվում է ծառայողների օրինական գործողություններին խոչընդոտելը կամ միջամտելը:

## 14. Բանկի ղեկավարների պատասխանատվությունը

14.1. Բանկի ղեկավարները գործում են ելնելով Բանկի շահերից, իրականացնում են իրենց իրավունքները և կատարում են Բանկի նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով (ֆիդուցիար պարտականություն):

Բանկի ղեկավարները Բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Եթե Բանկին վնաս պատճառած արարքն իրականացրել են Բանկի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են Բանկի այն ղեկավարները, որոնք Բանկին վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

14.2. Եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ:

14.3. Բանկի ղեկավարների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետևյալ հնարավոր դեպքերը՝

ա) մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, Բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվների խախտումով տրամադրված վարկերի, փոխառությունների կամ կնքված այլ գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի վարչության նախագահը, իսկ եթե տվյալ գործարքի կնքման համար օրենքով պահանջվում է խորհրդի որոշում, ապա խորհրդի անդամները և վարչության նախագահը.

բ) գործադիր մարմնի անդամները պարտավոր են հատուցել նաև Բանկի խորհրդի կողմից ընդունված ներքին իրավական ակտերի խախտումներով կնքված գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասները.

գ) եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում Բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար, բացառությամբ, եթե խորհրդի անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար և խելամիտ գործողություններ.

դ) եթե ներքին աուդիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները Բանկի խորհրդին չեն ներկայացվել, և հետագայում բանկը, այդ խախտումներով պայմանավորված, վնասներ է կրել, ապա ներքին աուդիտի ղեկավարը պարտավոր է հատուցել այդ իրական վնասները.

ե) եթե Բանկի հետ կապված անձի հետ գործարքը կնքվել է Բանկի ներքին ընթացակարգերի խախտումով խորհրդին ներկայացված դրական եզրակացության հիման

վրա, ապա այդ գործարքի հետեւանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի վարչության նախագահը:

14.4. Անձն ազատվում է Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են Բանկի շահերից: Մասնավորապես՝

ա) եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք Բանկին հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ.

բ) եթե ղեկավարի կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հստակապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:

Բանկի ղեկավարների պաշտոնից ազատվելը չի ազատում նրանց իրենց մեղքով Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

## 15. Բանկի վերակազմակերպումը

15.1. Բանկը կարող է վերակազմակերպվել Բանկի՝ մեկ այլ Բանկի հետ միացման և Բանկի վերակազմավորման միջոցով:

Բանկի վերակազմավորումը (կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունը) կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Բանկի միացումը կատարվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մասին սահմանված կարգով:

## 16. Բանկի լուծարումը

16.1. Բանկը լուծարվում է՝

ա) լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում.

բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.

գ) "Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում.

դ) Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ.

ե) օրենքներով նախատեսված այլ հիմքերով:

Սույն կետի "գ" ենթակետով սահմանված դեպքերում Բանկը լուծարվում է "Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

16.2. Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Բանկի լուծարման մասին, եթե Բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

Ընդհանուր ժողովի որոշմամբ բանկի լուծարման նպատակով ընդհանուր ժողովի կողմից լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման հիման վրա Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում Բանկի լուծարման նախնական համաձայնություն ստանալու հայտ՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Կենտրոնական բանկի խորհուրդը քննարկում է հայտը եռամսյա ժամկետում և իրավունք ունի մերժելու այն, եթե Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով լուծարումը կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը: Այս դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երկարաձգել Բանկի գործունեությունը մինչև երկու տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի կողմից Բանկին լուծարման նախնական համաձայնություն տալու դեպքում Բանկը կարող է միջոցներ ձեռնարկել ավանդատուների, բանկային հաշիվների

տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ Բանկի պարտավորությունների դադարեցման ուղղությամբ:

Սույն կետում նշված պարտավորությունները դադարեցնելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել: Այդ որոշման ընդունումից հետո Բանկն անմիջապես Կենտրոնական բանկ է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու հայտ՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի մերժելու լուծարման թույլտվություն ստանալու հայտը, եթե առկա են ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաեւ դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ Բանկի պարտավորություններ կամ Բանկն ի վիճակի չէ բավարարելու իր պարտատերերի պահանջները:

Սույն կետին համապատասխան՝ Բանկի կողմից ներկայացված դիմումների մերժման հիմքերի բացակայությունն ստուգելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է լուծարման մասին որոշում կայացրած բանկում "Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնել ստուգում:

Կենտրոնական բանկը լուծարման թույլտվություն տալու դեպքում ընդունում է նաև Բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում:

16.3. Բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով սահմանված՝ դատարանի կամ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից՝ առնվազն հնգօրյա ժամկետում, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Բանկը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Այն կազմվում է առնվազն երեք անդամից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք: Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է տվյալ Բանկի վարչության նախագահը:

Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող Բանկի կառավարման լիազորությունները: Լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է Կենտրոնական բանկին Բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից:

Լուծարային հանձնաժողով չստեղծվելու դեպքում Բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

16.4. Բանկի կառավարման մարմինները պարտավոր են լուծարային հանձնաժողով ձևավորելու մասին որոշման կայացումից հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովին հանձնել Բանկի կնիքը, դրոշմակնիքները, փաստաթղթերը, նյութական և այլ արժեքներ:

Լուծարային հանձնաժողով նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովի նախագահը դիմում է պետական լիազորված մարմին՝ լուծարվող բանկի ֆիրմային անվանման մեջ ներառելու "լուծարվող բանկ" բառերը: Պետական լիազորված մարմինը դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարվող Բանկի ֆիրմային անվանման մեջ կատարում է փոփոխություն՝ ներառելով "լուծարվող բանկ" բառերը:

Լուծարային հանձնաժողովը պարտավոր է սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով լուծարվող Բանկի ֆիրմային անվանման մեջ փոփոխություն կատարելուց հետո ողջամիտ ժամկետում փոխել լուծարվող Բանկի կնիքը, դրոշմակնիքը, կապարակնիքը, ձևաթղթերը՝ ներառելով "լուծարվող բանկ" բառերը:

Լուծարային հանձնաժողովը սույն կանոնադրությամբ սահմանված՝ պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում՝

ա) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Բանկին ի պահ հանձնված գույքը դրա սեփականատերերին վերադարձնելու և այդ կապակցությամբ վերջնական հաշվարկներ

կատարելու ուղղությամբ: Լուծարային հանձնաժողովը ծանուցումներ է ուղարկում գույքի սեփականատերերին: Լուծարային հանձնաժողովի ծանուցումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, գույքի սեփականատերերը պարտավոր են վերցնել Բանկին ի պահ հանձնված գույքը: Եթե սահմանված մեկամսյա ժամկետում գույքի սեփականատերերը չեն դիմում Բանկ, ապա լուծարային հանձնաժողովը գույքը հանձնում է ի պահ՝ օրենքով սահմանված կարգով կնքելով պայմանագիր.

բ) հաշվեգրում և գնահատում է լուծարվող Բանկի ակտիվներն ու պասսիվները.

գ) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ Բանկի պարտատերերին հայտնաբերելու և Բանկի դեբիտորական պարտքերն ստանալու, լուծարվող Բանկի կողմից տրված վարկերը ժամկետից շուտ վերադարձնելու ուղղությամբ.

դ) միջոցներ է ձեռնարկում լուծարվող Բանկի ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար.

ե) միջոցներ է ձեռնարկում լուծարվող Բանկի նկատմամբ առկա պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ.

զ) որոշում է Բանկի պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները մասնակիցների միջև բաշխելու կարգը:

Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկություններ՝

ա) լուծարվող Բանկի գույքի կազմի մասին.

բ) պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ Բանկի հաշվեկշռում արտացոլված կամ Բանկին ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր ավանդատուին, վարկատուին կամ այլ պարտատիրոջը հասանելիք գումարի չափը օրենքի սահմանված՝ պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը.

գ) այդ պահանջների քննարկման արդյունքների մասին.

դ) Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ տեղեկություններ:

Լուծարային հանձնաժողովը պարտավոր է սույն կետով սահմանված կարգով միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակած թերթի մեկ օրինակը հրապարակման օրը ներկայացնել Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի պարտադրելու լուծարային հանձնաժողովին միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակել առնվազն 2000 տպաքանակ ունեցող այլ մամուլում:

16.5. Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջները բավարարում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հերթականությամբ, միջանկյալ լուծարային հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից:

16.6. Բանկի լուծարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով լուծարման գործընթացում գտնվող Բանկում Կենտրոնական բանկը կարող է իրականացնել ստուգում: Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ձևով, հաճախականությամբ և ժամկետներում հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ:

Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ պարբերաբար, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, տեղեկություններ հրապարակել մամուլում:

Կենտրոնական բանկն իրավունք ունի լուծարային հանձնաժողովից պահանջելու ցանկացած տեղեկություն նրա գործունեության վերաբերյալ:

16.7. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը, որը լուծարվող Բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը ներկայացնում է Կենտրոնական բանկ:

Կենտրոնական բանկը տասնօրյա ժամկետում կայացնում է լուծարման հաշվեկշիռը հաստատելու կամ հաստատումը մերժելու մասին որոշում՝ նշելով մերժման հիմքերը:

Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը չհաստատելու դեպքում լուծարային հանձնաժողովը տասնօրյա ժամկետում վերացնում է Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշռի հաստատումը մերժելու հիմքերը և լուծարման հաշվեկշիռը լուծարվող Բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո այն հաստատելու մասին նոր դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ:

Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Կենտրոնական բանկը լուծարվող Բանկը գրանցումից հանելու մասին գրառում է կատարում բանկերի գրանցումների մատյանում, որից հետո Բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած: Կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին:

Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը Բանկի լուծարման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է Բանկի լուծարման հետ կապված պարտավորություններից:

16.8. Լուծարային հանձնաժողովի անդամները վարձատրություն են ստանում լուծարվող բանկի միջոցների հաշվին:

Լուծարային հանձնաժողովի անդամներն իրենց գործունեության ընթացքում թույլ տված խախտումների և իրենց գործողություններով պատճառված վնասի համար պատասխանատվություն են կրում օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն:

Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է Բանկի լուծարային հանձնաժողովի նախագահի և (կամ) անդամների կողմից սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում նրանց որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչել: Այդ դեպքում Բանկի ընդհանուր ժողովը մեկշաբաթյա ժամկետում նշանակում է լուծարային հանձնաժողովի նոր նախագահ կամ անդամ (անդամներ), հակառակ դեպքում լուծարային հանձնաժողովի նոր նախագահին կամ անդամին (անդամներին) նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Լուծարային հանձնաժողովի գործողությունները կարող են բողոքարկվել դատարան՝ Բանկի պարտատերերի, պարտապանների, Կենտրոնական բանկի կողմից:

16.9. Պարտատերերի պահանջները բավարարվում են լուծարային միջոցների սեփականության իրավունքով Բանկին պատկանող գույքի (միջոցների) հաշվին:

*****